ՄՏԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Հ. Ն.

Ժամանակակից տնտեսական համակարգի պայմաններում մարդկային կապիտալը դիտարկվում է արտադրական գործառույթների և ունակությունների իրացման տեսակետից, ինչը բնորոշ է արդյունաբերական տնտեսության ավանդական հասկացություններին՝ «աշխատուժին և աշխատանքին»: Անհրաժեշտ է նշել, որ մարդկային կապիտալի տեսությունը, ելնելով անհատի նպատակների, պահանջմունքների, նախապատվությունների կայուն և իներցիոն բնույթից, համապատասխանում է հասարակության պահանջմունքների այն կառուցվածքին, որտեղ գերակշռում են համեմատաբար դանդաղ փոփոխվող նյութական պահանջ-մունքները: Հետարդյունաբերական տնտեսությունում անհատները ձգտում են սեփական ունակությունների զարգացմանը և իրացմանը: Ոչ նյութական պահանջմունքները և շարժառիթները աստիճանաբար սկսում են գերակշռել, իսկ անհատների գործողությունները հակասում են «տնտեսական մարդու» վարքագծին: Տեղի է ունենում տնտեսական համակարգի նպատակների էական ճշգրտում:

ԳՏՀ-ի երկրորդ ալիքն առաջացրեց մտավոր կապիտալի տեսության զարգացման անհրաժեշտություն: Այդ ուղղության զարգացումը հնարավորություն տվեց գնահատել մարդու յուրահատուկ ընդունակությունների վրա հիմնված արտադրության արդյունավետությունը, բացահայտել անհատի գործունեության խորքային շարժառիթները, վերլուծել հետարդյունաբերական և տեղեկատվական հասարակության արտադրական նոր գործոնի՝ մտավոր կապիտալի գործունեության մեխանիզմներն ու օրենքները: 1997 թ. ԱՄՆ-ում և Անգլիայում հրատարակվեց ամերի-կացի տնտեսագետ և հրապարակախոս Թոմաս Ստյուարտի «Մտավոր կապիտալ: Կորպորացիաների հարստացման նոր աղբյուր» աշխատությունը: 1997 թ. հրապարակվեց ևս մի աշխատություն՝ Լեյֆ Էդվինսոնի և Մայքլ Մելոունի «Մտավոր կապիտալ: Ընկերության իրական արժեքի որոշումը»: Զարգացած երկրներում տեղի ունեցող իրադարձությունների հետաքրքրաշարժ վերլուծություն է ճապոնացի գիտնական Տաիչի Սակայայի 1992 թ. հրատարակած «Գիտելիքներով ստեղծված արժեք կամ ապագայի պատմություն» ուսումնասիրությունը: Աշխատանքը նվիրված է ժամանակակից հասարակության գլոբալ փոփոխություններին, որոնց ակնհայտ ապացույցն են գիտելիքների լայն տարածումը, բարիքներում դրանց անմիջական նյութականացումը, ինչպես նաև այն փաստը, որ տնտեսությունները վերածվում են գիտելիքների փոխանակման և դրանց գնահատման վրա հիմնված մի համակարգի:

«Հետարդյունաբերական տնտեսությունում նախապատվություն է տրվում ծառայությունների արտադրությանը, հետազոտությունների իրականացմանը, կրթական համակարգի կազմակերպմանը և կյանքի որա-

կի բարձրացմանը, որտեղ տեխնիկական մասնագետները վերափոխվում են բարձրորակ մասնագիտական խմբի, և, ամենակարևորը, նորարարությունների ներդրումը… առավելապես կախված է տեսական գիտելիքների նվաճումներից… Հետարդյունաբերական հասարակությունը… ենթադրում է նոր դասակարգի ձևավորում, որի ներկայացուցիչները քաղաքական մակարդակում հանդես կգան իբրև խորհրդատուներ, էքսպերտներ կամ տեխնոկրատներ»[1]: Հետինդուստրիալիզմի տեսության հիմնադիր Դ. Բելլի այս սահմանումն ընդունելի է տվյալ հիմնահարցերով զբաղվող շատ գիտնականների համար:

Մտավոր կապիտալը սահմանելիս նպատակահարմար է այն դիտարկել երկու տեսանկյունից՝ 1) հիմնվել մտավոր կապիտալի գործառույթների և տնտեսական էության վերլուծության վրա, 2) հիմնվել իրավական կողմնորոշման վրա, այսինքն՝ ուշադրություն դարձնել միայն այն օբյեկտներին, որոնք ամրագրված են զարգացած հետարդյունաբերական երկրների իրավական համակարգերում:

Մտավոր կապիտալի տնտեսական էության բացահայտումը կիրառական հիմք է իրավական բազայի ընդլայնման համար: Միաժամանակ, մտավոր կապիտալն ընդգրկում է ոչ միայն իրավական հիմք ունեցող մտավոր սեփականությունը, այլև անհատի անձնական հատկությունները, որոնք ոչ նյութական լինելու պատճառով, օրենսդրորեն հաստատված սեփականություն չեն: Կարելի է մտավոր կապիտալը սահմանել որպես անհատի գիտելիքների, ունակությունների, շարժունակության (նոր տեղեկատվություն ընկալելու, վերապատրաստման ունակություն, հարմարվողականություն) և կրեատիվության (մտածելու և կարծիքը հայտնելու, անսովոր գաղափարներ արտահայտելու ունակություն) համակցություն: «Մտավոր կապիտալ» եզրը գործածության մեջ դրվեց հետարդյունաբերական հասարակության վերաբերյալ տեսություններում, իսկ լայնածավալ կիրառություն ստացավ 1980-1990 թթ., երբ զարգացած երկրներում տեղի էր ունենում տնտեսությունների մտավորականացում: Դեռևս 1970-ական թվականներին ազգային տնտեսությունները սկսեցին պայքարել բարձրորակ աշխատուժ ձեռք բերելու համար: Սկսվեց «ուղեղների արտահոսք», որն առաջին հերթին ընդգրկեց տեսաբան գիտնականներին և ծրագրավորողներին: Արտադրամիջոցների բուռն առաջընթացի պայմաններում զարգացում ապրեց նաև մարդկային կապիտալի տեսությունը: Մարդկային կապիտալը համարվեց հիմնական արտադրական գործոն: Տնտեսական համակարգերի հետագա զարգացումը ոչ միայն բարձրացրեց մարդու դերը արտադրական գործընթացում, այլև ապահովեց նրա առաջատար տեղը հավելյալ արժեքի արտադրությունում: Նմանօրինակ զարգացումը և այդ գործընթացների վերլուծությունը հիմք դարձան աշխատուժի մտավոր գործառույթների դիտարկման համար: Մտավոր ունակությունների առաջատար դերը արտադրական գործընթացում, ինչպես նաև տնտեսության մտավորականացումը «մտավոր կապիտալ» կատեգորիայի վերլուծության անհրաժեշտություն առաջացրեցին:

---

[1] **Bell D.,** *Notes on the Post-Industrial Society (The Public Interest, 1967, N 7, p. 102).*

Մասնագիտական գրականության մեջ «մարդկային կապիտալ» և «մտավոր կապիտալ» հասկացությունների միջև իմաստային դաշտում նկատելի տարբերություն չի դրվում: Մտավոր կապիտալի էությունն ուսումնասիրելիս երբեմն չի դիտարկվում մարդկային կապիտալը: Այն առանձին ուսումնասիրության առարկա է համարվում: Սակայն անհրաժեշտ է այս կատեգորիաների հստակ սահմանազատում: Արդյո՞ք մտավոր կապիտալը մարդկային կապիտալի մի մասն է կազմում, թե՞ այն հնարավոր է առանձնացնել որպես անհատի յուրահատուկ ունակությունների համակարգ: Կարելի է պնդել նաև հակառակը՝ մտավոր կապիտալը ներառում է մարդկայինը: Մտավոր կապիտալն ընգրկում է նաև ոչ նյութական տարրեր, որոնք ապահովում են ինչպես մարդկային, այնպես էլ «մյուս կապիտալների» արդյունավետ օգտագործումը: Այսպիսով, դիտարկվում է «մտավոր կապիտալ» կատեգորիայի ուսումնասիրության երկու մոտեցում.

1. մտավոր կապիտալը մարդկային կապիտալի մի մասն է, որը «պայմանավորված է գործունեության փոխանակության հատուկ ոլորտի ձևավորմամբ՝ կապված աշխատաժամանակի տնտեսման, սպառման արդյունավետության բարձրացման, աշխատանքի և կենսագործունեության պայմանների փոփոխության, տեղեկատվության փոխանցման, «նոու-հաու»-ների հետ»[2],

2. «մտավոր կապիտալ» հասկացությունը ավելի լայն է, քան «մարդկային կապիտալը» և ներառում է տեղեկատվությունը՝ որպես առանձին արտադրական գործոն[3]:

Դժվար է որոշել այդ երկու գործոնների տնտեսական արդյունավետությունը, քանզի դրանք հաճախ համընկնում են կամ փոխարինում միմյանց: Ուստի այդ երկու կատեգորիաները անհրաժեշտ է դիտարկել տարբեր մակարդակներում: Պետք է քննարկել նաև դրանց փոխհարաբերությունները մյուս ռեսուրսների հետ, քանի որ միայն բազմամակարդակ վերլուծությունն է հնարավորություն տալիս բացահայտել այս երևույթների ողջ բազմազանությունը: Այսպես, մարդկային կապիտալը միկրոմակարդակում որոշակի գիտելիքների, հմտությունների, ունակությունների, շարժունակության, միմյանց փոխարինելու ունակությունների պաշար ունեցող կոլեկտիվ է, որն ունակ է արագ և որակով կատարել առաջադրված խնդիրները և անփոփոխ աշխատավարձի պայմաններում բարձրացնել նոր արժեքի արտադրության աճի տեմպերը:

Մտավոր կապիտալն արտադրությունում կիրառվող (ռեսուրս) կամ աշխատանքը կազմակերպող (կառավարող) կուտակված մտավոր կարողությունների և հատուկ գիտելիքների համակցություն է: Այդ ունակություններն անբաժանելի են դրանց անմիջական կրողներից՝ մարդկանցից: Ակնհայտ է, որ այդ բնորոշմանը համապատասխանում է բարձր որակավորում ունեցող անձնակազմը: Մյուս կողմից, մտավոր կապիտալը ներառում է ձեռնարկության արդյունավետ աշխատանքը երաշխավորող

---

[2] **Критский М. М.**, *Человеческий капитал в системе экономических отношений, М., 1995, с. 223.*

[3] **Цвылев Р.**, *Социальный конфликт в постиндустриальной экономике (Институт мировой экономики и международных отношений, 1998, N 10, с. 38-39).*

ոչ նյութական գործոնները (սկսած կազմակերպչական կառուցվածքից մինչև հաշվապահությունում ծրագրավորման կիրառությունը): Այսպիսով, մտավոր կապիտալը միկրոմակարդակում ներառում է ձեռնարկության մարդկային կապիտալի մտավոր մասը և ոչ նյութական ակտիվները, ինչպիսիք են պատենտները, արտոնագրերը, ապրանքանիշները, կազմակերպչական կառույցները, էլեկտրոնային ցանցերը և տվյալների բազաները, կապի համակարգերը և այլն: Այս տեսակետին է հարում այդ հիմնախնդիրներով զբաղվող գիտնականների մեծ մասը[4]:

Մտավոր և մարդկային կապիտալների նմանօրինակ մեկնաբանություն է տալիս նաև դրանց վերլուծությունը մակրոմակարդակում:Կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները:Մարդկային կապիտալը ազգային մակարդակում աշխատունակ բնակչության զանգվածն է:Այն ներառում է նաև ոչ զբաղվածներին, օրինակ, տնային տնտեսուհիներին,որոնք մասնակցում են հասարակության վերարտադրությանը՝ երեխաներ դաստիարակելով և տնտեսություն վարելով:Երեխաները մարդկային կապիտալ չեն համարվում, քանզի չեն կարող հատույց ապահովել, այսինքն՝ օժտված են այդպիսի ներուժով, սակայն չեն դիտարկվում որպես գործոն:Միաժամանակ, մակրոմակարդակում մարդկային կապիտալի ոչ լիարժեք օգտագործման պայմաններում (գործազրկության բարձր մակարդակ, արտադրության էքստենսիվ եղանակ) այս ամենը գործոնից վերածվում է ներուժի: Ընդ որում, ժամանակակից պայմաններում համախառն ներքին արդյունքի արտադրությունը նպատակահարմար է հասարակության կրրթական և որակական ներուժի առավելագույն օգտագործման պարագայում:Միայն այդ դեպքում են իրացվում մարդկային կապիտալի՝ որպես ռեսուրսի, գործառույթները: Մտավոր կապիտալը մակրոմակարդակում ներառում է ոչ նյութական տարրեր և մարդկային կապիտալի մտավոր, մշակութային, հոգևոր ներուժը կրողների զանգվածը:Մտավոր մարդկային կապիտալն ընդգրկում է.1.Բարձրագույն կրթություն ստացած, տարբեր գիտական աստիճանների տեր անձանց: Նույնիսկ, եթե նրանց մի մասը արտադրական գործունեության ընթացքում չի կիրառում իր գիտելիքները, այդուհանդերձ, մնում է գիտելիքների, հոգևոր և մշակութային արժեքների կրող և մասնակցում է արտադրական գործընթացում՝ որպես մտավոր միավոր:Մտավոր կապիտալը ոչ միայն մասնակցում է հավելյալ արժեքի արտադրության գործընթացին, այլև փոփոխության է ենթարկում մարդու պահանջմունքները և արժեքային համակարգը՝ նրան դրդելով ձգտել բարոյական և մտավոր ինքնահաստատման:2.Ձեռներեցներին և միջին օղակների բիզնեսմեններին:Այս խմբի ներկայացուցիչների գործունեությունն անհնար է առանց մտավորական ու տեղեկատվական լուրջ կարողությունների և ստեղծագործ աշխատանքի:Դա գաղափարներ «արտադրող» խավ է:Այս խմբում ներառված չեն փոքր ձեռնարկատիրության ներկայացուցիչները:Այդպիսի ձեռնարկությունները հիմնականում գործում են մանր առևտրում և սպասարկման ածանցյալ ոլորտներում,որտեղ մտավոր գործունեություն և ստեղծագործ աշխատանք չեն պահանջվում:

[4] Տե՛ս **Edvisson L., Malone M.,** *Intellectual Capital. Realizing Your Company's True Value by Finding its Hidden Roots, N. Y., 1997, p. 10-12.*

Կառուցվածքային մտավոր կապիտալը, որպես մտավոր կապիտալի մաս, ազգային մակարդակում ներառում է չորս տարր. 1. հասարակության տեղեկատվական կառուցվածք, որն ընդգրկում է տեղեկատվության կրողների ամբողջությունը (տվյալների բազաներ և որևէ տեսակի գրադարաններ), տվյալների և տեղեկատվության փոխանցման միջոցների ամբողջությունը, ընդ որում, մեծ նշանակություն ունեն դրանց բնույթը, ծավալը, մատչելիությունը, արագությունը և հուսալիությունը: 2. Գիտական և նախագծային ինստիտուտների համակարգ: Այս կազմակերպությունների գործունեությունը ներքին արդյունքի վերարտադրության մի մասնիկ է: Ամեն մի մտավոր արտադրություն ենթադրում է գիտելիքների և տեղեկատվության արտադրություն և սպառում: Այդ տարրերի յուրահատկությունների պատճառով գործընթացը հաճախ վերածվում է փակ միջավայրի՝ գիտելիքների և տեղեկատվության կամայական՝ նյութական կամ ոչ նյութական սպառում: 3. Կրթության համակարգ (միջնակարգ, բարձրագույն): Այստեղ առաջնահերթ են դառնում համակարգի որակական բնութագրիչները և մատչելիությունը: Ժողովրդի մշակութային, հոգևոր և մտավոր ներուժը պայմանավորված է կրթության համակարգով: Վճարովի հատվածի գերակշռության պայմաններում առաջանում են երկու խիստ բացասական երևույթներ: Նախ, իջնում է հավակնորդների ընտրության արդյունավետությունը, օժտված երիտասարդների մի զգալի մաս զրկվում է բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Հետարդյունաբերական տնտեսության պայմաններում այդ իրավիճակը ուղղակիորեն ազդում է հասարակական վերարտադրության արդյունավետության վրա: 4. Կառավարման պետական կառուցվածքը, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունեն օրենքների ընդունման և վավերացման արագությունն ու արդյունավետությունը: Անհրաժեշտ է հատուկ նշել գիտական և տեղեկատվական կարողության պաշտպանության արդյունավետությունը:

Գոյություն ունեն նաև մտավոր-մարդկային և մտավոր-կառուցվածքային կապիտալների գործունեության պայմանները և որակական բնութագրիչները գնահատող լրացուցիչ գործոններ: Դրանք են՝ բժշկական սպասարկման համակարգը, ազգային մշակույթի և սոցիալական համակարգի զարգացման մակարդակը, արտաքին, վերազգային գործոնների համակարգը (մասնավորապես, մտավոր արտադրանքի իրացման արտաքին տնտեսական քաղաքականությունը): Կարևոր է այն, թե պետությունը որդեգրել է ներքին կադրերի պատրաստման քաղաքականությո՞ւն, թե՞ նախընտրում է «ուղեղներ» ներկրել արտասահմանից:

Էապես տարբերվում են նաև մարդկային և մտավոր կապիտալների իրացման եղանակները: Մարդկային կապիտալը կարող է իրացվել միայն արտադրամիջոցների հետ զուգակցման պայմաններում: Ընդ որում, մարդկային կապիտալը կոլեկտիվում մարմնավորված գիտելիքների, ունակությունների, մասնագիտական կարողությունների ամբողջությունն է ինչպես միկրոմակարդակում, այնպես էլ ողջ տնտեսական համակարգում:

Մտավոր կապիտալը աշխատողի յուրահատուկ ունակություններն են, որոնք կարող են իրացվել առանց արտադրամիջոցների օգնության: Մարդու մտավոր կապիտալը մենատիրական եկամուտ ստանալու հնարավորություն է տալիս: Այն ենթադրում է ոչ միայն որոշակի որակավորում,

այլև հատկությունների մի ամբողջ համալիր (բարոյահոգեբանական հատկանիշներ, հոգևոր ներուժ, արագ որոշումներ ընդունելու ունակություն), որոնք և տալիս են մենաշնորհ եկամուտ ստանալու հնարավորություն: Այս դրույթի լավ օրինակ է վիրաբուժությունը: Աշխարհում գործում են մեծ թվով վիրաբույժ-սրտաբաններ, սակայն բարդ վիրահատությունների համար հազվագյուտ ունակություններով օժտված են մի քանիսը: Բնականաբար, նրանք մենաշնորհ եկամուտ ստանալու հնարավորություններ ունեն:

Դիտարկենք ժամանակակից տնտեսություններում վերարտադրության գործընթացի վրա մեծ ազդեցություն ունեցող մտավոր կապիտալի առանձնահատկությունները:

1. Ելնելով մտավոր կապիտալի սահմանումից՝ կարելի է ասել, որ դրա բնութագրիչն է գիտելիքների և տեղեկատվության շարժը: Ընդ որում, գիտելիքները և տեղեկատվությունը ոչ թե աշխատանքային ծախսումներ են, այլ մարդու սպառողական կամ արտադրողական կարողությունը վերարտադրող սպառողական արժեք:

2. Մտավոր կապիտալի շարժը գիտելիքների արտադրության և սպառման գործընթացների սերտ փոխկապվածությունն է: Մտավոր կապիտալի ձևավորումը տեղի է ունենում գիտելիքների սպառման ընթացքում կամ դրանց վերարտադրության ոլորտում, կամ էլ մտավոր ստեղծագործական աշխատանքի ընթացքում:

3. Մտավոր կապիտալի շարժը չի զուգորդվում տնտեսավարող սուբյեկտից մտավոր սեփականության օտարմամբ: Տեղեկատվությունը փոխանցող սուբյեկտը պահպանում է և սեփականության իրավունքը, և դրա հետագա իրացման հնարավորությունը:

4. ԳՏԱ-ի զարգացմանը զուգընթաց սպառողական արժեք են դառնում ինչպես գիտելիքները, այնպես էլ դրանց փոխանցման կոնկրետ հնարավորությունները: Տեղեկատվություն տրամադրող սուբյեկտը հավակնում է սպառման կամ արտադրության ոլորտներում այդ տեղեկատվության օգտագործումից ստացած եկամտի որոշ մասին:

5. Մտավոր կապիտալի շարժը կապված է եկամտի ստացման հետ: Դա տոկոս է, որը հանդես է գալիս որպես մտավոր կապիտալի գին:

6. Մարդու մտավոր կապիտալի՝ որպես ստեղծագործական ունակությունների իրացումը կրում է ռիսկային գործոն՝ կապված արդյունքի ստացման անորոշության հետ: Եկամուտը կարող է տրամադրվել միանվագ կամ մաս առ մաս վճարվող տոկոսի տեսքով:

7. Մտավոր արտադրությունում գործունեության առաջնային ձև է անհատական ստեղծագործ աշխատանքը: Մտավոր կապիտալի կարևոր բնութագրիչն են անհատի առանձնահատկությունները, ինչը մտավոր կապիտալը վերածում է մարդկային մենաշնորհի[5]:

Հետարդյունաբերական տնտեսությունում գիտելիքների և տեղեկատվության արտադրության գործընթացներն անմիջականորեն կապված են դրանց սպառման հետ: Բնականաբար, առաջանում են ոչ նյութական նոր պահանջմունքներ և դրանց բավարարման նոր ոլորտներ: Ստեղծա-

[5] *Տե՛ս* **Критский М. М.,** նշվ. աշխ., էջ 218-241, 299-303:

գործող անհատի համար առաջին պլան են մղվում անհատականության դրսևորումը, նոր գիտելիքների ձեռքբերումը, ստեղծագործելը դիտարկվում է որպես պահանջմունք:

Ստեղծագործ աշխատանք կատարող անհատը մասամբ անկախ է հասարակությունից, իսկ նրա աշխատանքը խիստ անհատական է: Այսպիսով, արտադրական ոլորտներում մարդու ստեղծագործ աշխատանքը միաժամանակ բավարարում է նրա պահանջմունքները: Հենվելով այդ դրույթի վրա՝ գիտնականները պնդում են, որ ժամանակակից՝ «նոր» տեսակի աշխատողը չի կարող շահագործվել: Ինչ վերաբերում է շահագործմանը, ապա այն տնտեսականից վերածվում է հոգեբանականի:

«Ժամանակակից պայմաններում շահագործման ֆենոմենը պետք է իմաստավորվի փոփոխություններ կրած սոցիալական իրականության տեսակետից... Այն չի կարող հաղթահարվել հասարակական արդյունքի վերաբաշխման միջոցով… Շահագործման վերացումը հնարավոր է միայն գիտակցության «ֆենոմենի» հաղթահարմամբ: Հասարակությունում, որտեղ մարդը հիմնական է համարում նյութական պահանջմունքները, դրանց կրճատումը ընկալվում է որպես շահագործում, իսկ այնտեղ, որտեղ հետաքրքրությունները խստորեն կախված չեն նյութական նպատակներից, շահագործումը դադարում է սոցիալական հարաբերությունների էական տարր լինելուց: Շահագործման՝ որպես տնտեսական դարաշրջանին բնորոշ հատկանիշի հաղթահարումը երկարատև գործընթաց է՝ կախված մարդկային գիտակցության իներտության հետ»[6]:

Ժամանակակից տնտեսություններում որոշ տնտեսական գործընթացներ հոգեբանական տարբեր հատկանիշներով են բնութագրվում: Անհատականացվում է արտադրական գործընթացը, առաջնային են դառնում ապրանք կամ ծառայություն արտադրողի յուրահատուկ կարողությունները:

КРИТЕРИИ ОПРЕДЕЛЕНИЯ ИНТЕЛЛЕКТУАЛЬНОГО КАПИТАЛА В СОВРЕМЕННОЙ ЭКОНОМИКЕ

ГАЛСТЯН А. Н.

Резюме

В последние годы в экономической литературе все больше внимания уделяется категории “интеллектуальный капитал”. Интеллектуальный капитал формируется за счет реализации знаний, в сфере их воспроизводства или же в процессе творческой деятельности. В специальной литературе в основном обсуждается структурная составляющая интеллектуального капитала (патенты, лицензии и т. д.). На сегодняшний день предметом особого внимания стали интеллектуальные способности человека, а также проблема определения и изучения личностного интеллектуального капитала.

[6] **Иноземцев В. Л.,** *За пределами экономического общества, М., 1998, с. 8.*